ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

21 փետրվարի 2012 թվականի թիվ 5 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՐՏԻ 1-ԻՆ ՔՊ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՆՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետով և համաձայն ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2012թ հիմնական միջոցառումների պլանի

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ ԵՄ

1.2012թ մարտի 1-ին Տավուշի մարզում անցկացնել ցուցադրական օբյեկտային վարժանք <<Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը երկրաշարժի ժամանակ>> թեմայով:
2.Վարժանքին մասնակից դարձնել՝
1/ Մարզային փրկարարական վարչությանը.
2/ Աչաջրի միջնակարգ դպրոցին:
3.Ցուցադրական վարժանքը պատշաճ մակարդակով նախապատրաստելու և անցկացնելու նպատակով Աչաջրի միջնակարդ դպրոցի տնօրենին՝
1/ Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը.
2/ Կազմակերպել պարապմունքներ դպրոցի ուսուցչական և աշակերտական կազմի հետ:
4.ՈՒսումնավարժության ընթացքում գործնականորեն իրականացնել դպրոցի ուսուցչական և աշակերտական կազմի ազդարարում և հավաք:
5.ՈՒսումնավարժության ղեկավար նշանակել Աչաջրի միջնակարգ դպրոցի տնօրեն Ս.Ղալթախչյանին:
6.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

ք. Իջևան
21 փետրվարի 2012թ.